Թողարկման 18-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2011

սեպտեմբեր

թիվ 9 (157)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «Արբունպրոմ» ԱՄ ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու, «Թել-Սել» ՍՊԸ «Գյուլբենկյան» մասնաճյուղը հաշվառելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Արարատբանկ» ԲԲԸ-ի և «Արցախբանկ» ՓԲԸ-ի համապատասխանաբար «Գորիս» և «Քարվաճառ» մասնաճյուղերը գրանցելու, «Ֆինքա» Ուվկ ՓԲԸ-ի «Ստեփանավան» ներկայացուցչությունը գրանցումից հանելու և միաժամանակ «Ստեփանավան» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները որոշ ՓԲԸ-ների, ՍՊԸ-ների և փոխանակման կետերի նկատմամբ տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 209-Ն որոշումը «Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգը» հաստատելու մասին»

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 210-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 227-Ն որոշումը «2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

30 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 1 պաշտոնական պարզաբանումը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների կիրառման մասին»

33 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 234Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** Ա/Ձ Վանուշ Կոստանյանին տրամադրված արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիան (որոշում թիվ 247Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Արբունպրոմ» արտադրական միավորում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 248Ա):
- ***Հաշվառվել է «Թել-Սել»*** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Գյուլբեկյան» մասնաճյուղը (որոշում թիվ 250Ա):
- ***Գրանցվել են*** «Արարատբանկ» բաց և «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Գորիս» և «Քարվաճառ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/981Ա, 1/1000Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Ֆինքա» ունիվերսալ վարկային կազմակերպության փակ բաժնետիրական ընկերության «Ստեփանավան» ներկայացուցչությունը և ***գրանցվել*** նույն փակ բաժնետիրական ընկերության «Ստեփանավան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/1085Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 5 փակ բաժնետիրական, 7 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 7690000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/982Ա, 1/1024Ա, 1/1046Ա, 1/1051Ա, 1/1053Ա, 1/994Ա, 1/1006Ա, 1/1025Ա, 1/1039Ա, 1/1047Ա-1/1049Ա, 1/1023Ա) և 7 արտարժույթի փոխանակման կետերի, 2 սահմանափակ պատասխանատվությամբ և 2 փակ բաժնետիրական ընկերությունների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/997Ա, 1/1007Ա, 1/1008Ա, 1/1054Ա, 1/1055Ա, 1/1071Ա, 1/1072Ա, 1/1040Ա, 1/1050Ա, 1/1044Ա, 1/1051Ա):

*«Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգը» հաստատելու մասին**

Հաշվի առնելով ավտոմատ ինքնասպասարկող սարքերով մատուցվող ծառայությունների ոլորտի ընդլայնման դրական միտումը, այդ սարքերից օգտվող՝ օրեցօր ավելացող սպառողների թիվը և այդ տեսանկյունից սպառողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, որ դրանցում մշտապես կանխիկ դրամի առկայության հանգամանքներում առավել կարևորվում են այդ սարքերի անվտանգությանն ու հուսալիությանն ուղղված պահանջների սահմանումը,

Նպատակ ունենալով կանոնակարգել ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով իրականացվող ֆինանսական գործառնությունները և սահմանել այդ սարքերի տեղադրման և սպասարկման համար այլ անհրաժեշտ պահանջները,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, ինչպես նաև 49-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 7-ի «Ավտոմատ գանձման սարքավորումների շահագործման նվազագույն պայմանները» հաստատելու մասին» թիվ 321-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում տեղադրված ավտոմատ գանձման սարքերի (բանկոմատների) շահագործման անվտանգության պայմանները ապահովելու վերաբերյալ» մեթոդական ուղեցույցի մասին» թիվ 11 արձանագրային որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 օգոստոսի 2011 թ., N 209-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. օգոստոսի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.09.2011 թ. (ՀՀՊՏ N23 (406), 3.10.2011):

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի
թիվ 209-Ն որոշմամբ

Կ Ա Ր Գ

ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻՋՈՑՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգը սահմանում է ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման և շահագործման կարգը, դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության նկատմամբ և սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված պահանջները, ինչպես նաև ավտոմատ ինքնասպասարկող սարքերի անվտանգության ու հուսալիության հետ կապված կանոնները:

2. Սույն կարգով սահմանված պահանջները չեն տարածվում այն ավտոմատ ինքնասպասարկող սարքերի վրա, որոնց միջոցով հնարավոր չէ իրականացնել սույն կարգի 3-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ֆինանսական գործառնություններ:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները սույն կարգի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***ավտոմատ ինքնասպասարկող սարք***՝ գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված ինքնասպասարկման էլեկտրոնային ծրագրատեխնիկական այն սարքը, որն ապահովում է ֆինանսական գործառնությունների իրականացումը առանց ֆինանսական կազմակերպության աշխատակցի միջամտության (այսուհետ՝ ՖԳԻԱՍ),
2) ***սպառող***՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն օգտվում է կամ կարող է օգտվել ֆինանսական կազմակերպության կողմից ՖԳԻԱՍ-ների միջոցով մատուցվող ծառայություններից,
3) ՖԳԻԱՍ-ները ըստ տեսակի դասակարգվում են հետևյալ խմբերի.
   ա. ***ապրանքային ավտոմատ (vending machine)***՝ ապրանքներ վաճառող ավտոմատ մեքենա, որը տրամադրում է տարբեր ապրանքներ, տոմսեր, սքրէտչ քարտեր՝ կանխիկ մետաղադրամներով կամ թղթադրամներով, կամ վճարային քարտի օգտագործմամբ,
   բ. ***ավտոմատ գանձման մեքենա (full function automated teller machine ATM,)***՝ համակարգչային վերահսկվող սարք, որի միջոցով հաճախորդներն օգտագործելով վճարային քարտեր կամ նույնականացնող այլ միջոցներ կարող են կատարել դրամի կանխիկացում, դրամական փոխանցումներ, ծառայությունների դիմաց վճարումներ, ավանդների ներդրում, քաղվածքների ստացման հետ կապված գործարքներ, ինչպես նաև այլ գործարքներ կամ ծառայություններ, որոնք կարող էին մատուցվել բանկային աշխատակցի միջոցով (այսուհետ՝ բանկոմատ): Այս խմբին են դասվում նաև կանխիկի տրամադրման սարքերը (cash dispenser)՝ ավտոմատ մեքենա, որը տրամադրում է կանխիկ դրամ վճարային քարտի միջոցով, ինչպես նաև ստացականով կանխիկի տրամադրման սարքերը (scrip cash dispenser),
   գ. ***արժույթի փոխանակման ավտոմատ***՝ ավտոմատացված մեքենա, որն ապահովում է կանխիկ արժույթի փոխանակումը կանխիկ այլ արժույթով կամ խոշոր անվանական արժեքով արժույթի փոխանակումը նույն արժույթի ավելի մանր անվանական արժեք ունեցող թղթադրամներով կամ մետաղադրամներով,
   դ. ***վճարումների ընդունման տերմինալ***՝ ավտոմատացված մեքենա, որն ապահովում է որոշակի ծառայությունների դիմաց վճարումների ընդունումը կանխիկ դրամով,
   ե. ***տեղեկատվական վճարային տերմինալ (automated banking office)***՝ համակարգչային վերահսկվող սարք, որը բացի բանկոմատների միջոցով տրամադրվող ծառայություններից, մատու-

ցում է նաև ֆինանսական տեղեկատվական ծառայություններ, այդ թվում՝ բանկային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, քաղվածքների տրամադրում, բանկային ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում:

Տեղեկատվական վճարային տերմինալի միջոցով մատուցվող հիմնական ծառայությունների միջավայրը հանդիսանում է ինտերնետը և համատեղում է «ինտերնետ բանկինգին» բնորոշ ծառայություններ:

4) ***ֆինանսական գործառնություն***՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված գործառնությունները:

4. Այն դեպքում, երբ սույն կարգի 3-րդ կետի «ա» պարբերությունում նշված ապրանքային ավտոմատով կատարվող գործարքը չի իրականացվում վճարային քարտի միջոցով՝ անկանխիկ եղանակով կամ էլեկտրոնային փողերի միջոցով (օրինակ՝ էլեկտրոնային քսակների կամ էլեկտրոնային փողերի հաշվառման հաշիվների միջոցով), ապա սույն կարգով սահմանված պահանջները չեն տարածվում ապրանքային ավտոմատների վրա:

5. Լրացուցիչ ծրագրատեխնիկական մոդուլների տեղադրման միջոցով ՖԳԻԱՍ-ների կողմից մատուցվող ծառայությունները կարող են ընդլայնվել կամ արդիականացվել (Cash recycling systems, Intelligent deposit systems, Automated teller safes և այլ):

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. ՖԳԻԱՍ-ների միջոցով ֆինանսական գործառնությունների ապահովումը կարող են իրականացնել միայն բանկային կամ համապատասխան ֆինանսական ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող (օրինակ՝ վճարահաշվարկային ծառայությունների, արտարժույթի առուվաճառքի) անձինք (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություններ):

7. ՖԳԻԱՍ-ների տեխնիկական սպասարկումը, բացառությամբ փողի լիցքավորման և լիցքաթափման գործունեության, կարող է իրականացվել ցանկացած անձի կողմից համապատասխան պայմանագրի հիման վրա: Փողի լիցքավորման և լիցքաթափման գործունեություն կարող է իրականացնել ինկասացիոն կազմակերպությունը՝ համաձայն սույն կարգի Հավելված 1-ի:

8. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կարող է սահմանափակել ՖԳԻԱՍ-ների միջոցով իրականացվող գործառնությունները, եթե.

1) հնարավոր չէ ապահովել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործարքների կողմ հանդիսացող անձանց ՖԳԻԱՍ-ների միջոցով նույնականացման իրականացումը,
2) անհնար է պահպանել «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գործարքների նկատմամբ սահմանված պահանջները:

9. ՖԳԻԱՍ-ների միջոցով իրականացվող յուրաքանչյուր գործարքի նկատմամբ սահմանափակումները (այդ թվում՝ ՖԳԻԱՍ-ների ներդրման, տեղադրման, սպասարկման կամ շահագործման հետ կապված) սահմանվում են համաձայն սույն կարգի Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

10. Ֆինանսական կազմակերպության կողմից ՖԳԻԱՍ-ների միջոցով նոր գործառնությունների ներդրման պարագայում (որոնք սահմանված չեն սույն կարգի Հավելված 1-ում), կազմակերպությունը համապատասխան ծառայությունը մատուցելուց մեկ ամիս առաջ տեղեկացնում է Կենտրոնական բանկին ծառայության հետ կապված հնարավոր սահմանափակումների կամ դրանց բացակայության վերաբերյալ:

11. Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է լրացուցիչ տեղեկատվություն պահանջել ՖԳԻԱՍ-ների և դրանց միջոցով մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

12. Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ գործառնությունների մասով կիրառվող սահմանափակումները սահմանվում են համաձայն սույն կարգի Հավելված 2-ի:

ԳԼՈՒԽ 4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

13. Անվտանգության և հուսալիության կանոնները ուղղված են ՖԳԻԱՍ-ների անխափան աշխատանքի և հնարավոր կորուստների սահմանափակման, գործարքի կատարման ժամանակ հաճախորդների ֆիզիկական անվտանգության, հաճախորդի անձնական տվյալների և ֆինանսական հաղորդագրությունների գաղտնիության և ամբողջականության ապահովմանը, ինչպես նաև սարքավորումը վնասվելուց և կանխիկ փողերը հափշտակելուց պաշտպանությանը:

14. Ֆինանսական կազմակերպությունը ՖԳԻԱՍ-ների անվտանգությունը և հուսալիությունը ապահովելու համար.

1) ձեռնարկում է համապատասխան միջոցներ կեղծ թղթադրամների բացահայտման և դրանցով կատարվող գործարքների կասեցման ուղղությամբ,
2) ապահովում է անխափան էլեկտրասնուցում,
3) սահմանում է ՖԳԻԱՍ-ների միջոցով կեղծ թղթադրամների բացահայտման և բռնագանձման հետ կապված ընթացակարգեր, ինչպես նաև սույն կետի 4-րդ ենթակետում նշված խնդիրների լուծման համար առավելագույն ժամկետներ,
4) ՖԳԻԱՍ տեղադրած կազմակերպության կողմից իրական ժամանակում իրականացվում է այդ սարքավորումների տեխնիկական մոնիթորինգ՝ առկա խնդիրները (էներգիայի խափանում, ծրագրային և այլ տեխնիկական թերություններ) բացահայտելու և դրանց լուծում տալու նպատակով,
5) միջոցներ է ձեռնարկում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի թիվ 199-Ն որոշմամբ սահմանված շրջանառության համար ոչ պիտանի, անվճարունակ, հնամաշ թղթադրամների ընդունման բացառման ուղղությամբ,
6) կազմակերպում է իր կողմից տեղադրված ՖԳԻԱՍ-ների միջոցով նոր նմուշի թղթադրամների և մետաղադրամների ընդունումը, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից նկարագրված և հայտնաբերված թղթադրամի նոր տեսակի կեղծիքների բացահայտումը: Ընդ որում, սույն կետով նախատեսված դեպքերում թղթադրամների կամ մետաղադրամների ընդունմանն ուղղված ՖԳԻԱՍ-ների համապատասխան արդիականացումը չի կարող գերազանցել 6 ամիսը:

15. ՖԳԻԱՍ-ի կողմից ընդունված կանխիկ դրամը չի կարող անմիջապես կիրառվել տվյալ ՖԳԻԱՍ-ի միջոցով կանխիկ դրամի տրամադրման գործարքներում, մինչև տվյալ թղթադրամի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ առևտրային բանկի կողմից վճարունակության հատկանիշներին (կեղծ, ոչ պիտանի, անվճարունակ, հնամաշ փողը հայտնաբերելու նպատակով) համապատասխանության ստուգում անցնելը:

16. ՖԳԻԱՍ-ի կողմից կանխիկ դրամի տրամադրման գործարքներում կիրառվող կանխիկ դրամը պետք է լիցքավորվի ՖԳԻԱՍ սպասարկող կազմակերպության կողմից՝ վճարունակության հատկանիշներին չհամապատասխանող (կեղծ, ոչ պիտանի, անվճարունակ, հնամաշ) արժույթի շրջանառությունը կանխելու նպատակով:

17. ՖԳԻԱՍ-ի միջոցով վճարային քարտերի սպասարկումը կարող է իրականացվել միայն վճարային քարտերի համակարգի օպերատորի կողմից ինքնասպասարկման սարքավորումների համար սահմանված համապատասխանության պահանջներին բավարարելու դեպքում: Ինքնասպասարկման սարքավորումների համար սահմանված համապատասխանության պահանջներին բավարարելուց հետո համապատասխան քարտային համակարգի պատկերանշանը փակցվում է ՖԳԻԱՍ-ի դիմային և տեսանելի մասում, որից հետո միայն կարող է կատարվել տվյալ համակարգի քարտերի սպասարկումը:

18. ՖԳԻԱՍ-ները (բացառությամբ սույն կարգի Հավելված 1-ով սահմանված դեպքերի) պետք է ներկառուցված լինեն տեսանկարահանման համակարգով՝ աշխատող ինքնավար (Off line) կամ իրական (On line) ռեժիմներում: Ընդ որում, տեսախցիկը պետք է տեղադրված լինի այնպես, որ առնվազն տեսանկարահանվի ՖԳԻԱՍ-ին մոտեցած անձի դեմքը: Տեսախցիկը կարող է տեղադրվել ՖԳԻԱՍ-ի մեջ կամ ՖԳԻԱՍ-ին հարակից պատին կամ նրանից որոշակի հեռավորության վրա (օրինակ՝ շինության պատի կամ առաստաղի վրա):

19. ՖԳԻԱՍ-ի միջոցով վճարային քարտով յուրաքանչյուր գործարք իրականացնելու ժամանակ տեսագրվող տեսակադրերի հետ մեկտեղ պետք է նշվեն հետևյալ տվյալները.
1) ամսաթիվը (օր, ամիս, տարի),
2) ժամանակը (ժամ, րոպե. ընդ որում, ՖԳԻԱՍ-ի մեջ մուտքագրված և տեղային ժամանակների միջև տարբերությունը չպետք է գերազանցի 1 րոպեն),
3) ՖԳԻԱՍ-ի տեղադրման վայրը (հասցեն),
4) ՖԳԻԱՍ-ը սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը:

20. ՖԳԻԱՍ-ները պետք է ունենան գործող անվտանգության ահազանգման պայմանագրեր ոստիկանության կամ պետության կողմից արտոնագրված պահպանություն իրականացնող կազմակերպության հետ՝ յուրաքանչյուր ՖԳԻԱՍ-ի մասով, եթե անվտանգության ապահովումը չի իրականացնում տվյալ ՖԳԻԱՍ-ը տեղադրող կազմակերպության համապատասխան մասնագիտացված ստորաբաժանումը:

ԳԼՈՒԽ 5. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐ

21. Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված պահանջները կոչված են ՖԳԻԱՍ-ների միջոցով ծառայությունների մատուցման թափանցիկության և մատուցվող ծառայության վերաբերյալ հաճախորդների տեղեկացվածության ապահովմանը:

22. Ֆինանսական կազմակերպությունն առանց վճարային քարտի կիրառման գործարքներում մինչև ՖԳԻԱՍ-ների միջոցով ծառայությունների մատուցումը հաճախորդին ծանոթացնում է ծառայության հիմնական պայմանների, գանձվող միջնորդավճարների, կիրառվող փոխարժեքների, կիրառվող ժամկետների և տվյալ գործարքի իրականացման համար այլ էական պայմանների հետ:

23. Ֆինանսական կազմակերպության կողմից ծառայությունը մատուցվում է միայն հաճախորդի հստակ համաձայնությունը կամ կամահայտնությունը ստանալուց հետո (ՖԳԻԱՍ-ի էկրանի վրա ծառայությունը մատուցելու համաձայնության հարցմանը դրական պատասխան պարունակող ստեղնը սեղմելուց հետո): Այն դեպքում, երբ ՖԳԻԱՍ-ի ապարատածրագրային հնարավորությունները թույլ չեն տալիս վերադարձնել վճարման ենթակա գումարից ավելի մուտքագրված գումարը, ապա ՖԳԻԱՍ-ի վրա՝ տեսանելի հատվածում պետք է փակցված լինի համապատասխան հայտարարություն:

24. ՖԳԻԱՍ-ների վրա փակցվում է շահագործող ֆինանսական կազմակերպության անվանումը և հեռախոսահամարը (հնարավորության դեպքում՝ շուրջօրյա), որի միջոցով հաճախորդը կարող է կապվել ֆինանսական կազմակերպության համապատասխան բաժնի, ծառայության հետ՝ օգնություն կամ խորհրդատվություն ստանալու նպատակով:

25. Այն դեպքում, երբ վճարային քարտը հանդիսանում է բազմարժութային քարտ, ապա տվյալ քարտը թողարկած ֆինանսական կազմակերպությունը ապահովում է տվյալ քարտին կցված հաշիվների միջև ընտրության հնարավորություն՝ առնվազն մեկ ֆինանսական կազմակերպության ՖԳԻԱՍ-ների միջոցով:

26. ՖԳԻԱՍ-ների միջոցով յուրաքանչյուր գործարք կատարելուց հետո հաճախորդին տրամադրվում է գործարքի կատարումը հավաստող անդորրագիր: Անդորրագիրը կարող է չտրամադրվել միայն հաճախորդի՝ անդորրագիր չստանալու վերաբերյալ հստակ համաձայնությունը կամ կամահայտնությունը ստանալու դեպքում:

27. Անդորրագիրն առնվազն պարունակում է հետևյալ վավերապայմանները.

1) հավաստագրումը հավաստող կոդը (առկայության դեպքում),
2) անդորրագրի կազմման ամսաթիվը,
3) ՖԳԻԱՍ-ի նույնականացուցիչը, այդ թվում՝ ծառայություն մատուցող կազմակերպության անվանումը,
4) գործարքի գումարը, (արտարժույթի առուվաճառքի, փոխանակման, փոխարկման գործառնությունների դեպքում՝ հաճախորդից ընդունված և հաճախորդին տրամադրված գումարը),
5) գործարքի արժույթը (արտարժույթի առուվաճառքի, փոխանակման, փոխարկման գործառնությունների դեպքում՝ հաճախորդից ընդունված և հաճախորդին տրամադրված գումարի արժույթները),
6) գործարքի տեսակը,
7) վճարային քարտով գործարքի դեպքում՝ քարտի վավերապայմանները (անվտանգության կանոններով թույլատրելի չափով),
8) հաշվի վրա դրամական միջոցների մուտքագրման գործարքի դեպքում՝ հաշվի համարը կամ վճարային քարտի համարը (անվտանգության կանոններով թույլատրելի չափով):

ԳԼՈՒԽ 6. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

28. Առնվազն յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրվա վերջում ՖԳԻԱՍ-ի միջոցով կատարված գործառնությունները պետք է արտացոլվեն ֆինանսական կազմակերպության հաշվապահական հաշվառման համակարգում՝ տվյալ գործառնությունների համար սահմանված հաշվապահական հաշվառման կանոնների համաձայն:

29. ՖԳԻԱՍ-ների միջոցով կատարվող գործառնությունները հաշվառվում են առանձնացված եղանակով:

Հավելված 1
«Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգի»

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 209-Ն որոշմամբ

ՖԳԻԱՍ-ների միջոցով իրականացվող յուրաքանչյուր գործարքի նկատմամբ սահմանափակումները

		Արժույթի փոխանակման ավտոմատ	Վճարումների ընդունման տերմինալ	Ավտոմատ գանձման մեքենա (ԱԳՄ)	Տեղեկատվական վճարա յին տերմինալ	Ապրանքային ավտոմատ (սույն պահանջը տարածվում է այն դեպքում, երբ ապրանքային ավտոմատը սարքինացված է վճարային քարտեր սպասարկելու համար)
I	II	III	IV	V	VI	VII
1.	**ՖԳԻԱՍ-ի միջոցով իրականացվող գործարքների տեսակները և հնարավոր սահմանափակումները**					
1)	Յուրաքանչյուր գործարքի համար առավելագույն գումարի սահմանում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
2)	Յուրաքանչյուր գործարքի համար համապատասխան անդորրագրի տրամադրում	պարտադիր (բացառությամբ հաճախորդի կողմից հստակ ձևավորված բացասական պատասխանի դեպքի)	պարտադիր	պարտադիր (բացառությամբ հաճախորդի կողմից հստակ ձևավորված բացասական պատասխանի դեպքի)	պարտադիր	պարտադիր
3)	Շուրջօրյա գործառնությունների սպասարկման ապահովում /24*7/ (այն դեպքում, երբ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից նույն վայրում տեղադրված են երկու և ավելի ՖԳԻԱՍ-ներ, ապա առնվազն մեկը պետք է ապահովի սպասարկում): ՖԳԻԱՍ-ների միջոցով սպասարկման հասանելիությունը (հասանելիություն է համարվում ոչ ավելի, քան ամսական 22 ժամ չաշխատելու պայմանը) (տարեկան) պետք է կազմի 97%, ընդ որում՝ այն ՖԳԻԱՍ-ների համար, որոնք տեղադրված են ոչ շուրջօրյա ռեժիմով հասանելի վայրերում, 97% հասանելիության հաշվարկն իրականացվում է՝ հաշվի առնելով տվյալ վայրի աշխատանքային ժամանակը	պարտադիր	պարտադիր	պարտադիր	ոչ պարտադիր	պարտադիր
2.	**Անվտանգությունը**					
1)	Տեղադրվող սարքավորման տեխնիկական բնութագրիչների համապատասխանեցում տեղադրման վայրին	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
2)	Ինկասացիոն սպասարկման աշխատանքների անվտանգության ապահովում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
3)	Չհրկիզվող պահարանի դռան բացման տվիչի առկայություն	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
4)	Փին (Pin) կոդի մուտքագրման և էկրանին արտապատկերվող տեղեկության անտեսանելիության ապահովում կողմնակի անձանցից	-	-	պարտադիր	պարտադիր	-
5)	Տեսադիտարկման համակարգի առկայություն	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
6)	Տեսախցիկի միջոցով ինքնասպասարկման սարքավորմանը մոտեցող, վճարային քարտով կամ կանխիկով գործարք իրականացնող անձի դեմքը տեսանելի լինի	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր

7)	Հաճախորդի կողմից յուրաքանչյուր գործարքի իրականացման ընթացքում դիտարկման համար պիտանի առնվազն երեք տեսակադրի տեսագրում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
8)	Տարածքի լուսավորվածության և հաճախորդի սպասարկման համար լավ դիտարկելիության ապահովում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
9)	Հաճախորդի անհատական տվյալների պաշտպանության և գաղտնիության պահանջի այնպիսի ապահովում, որի դեպքում առնվազն ապահովվում է հաճախորդի կողմից իրականացվող գործարքի անտեսանելիությունը այլ անձանց կողմից: Ընդ որում, գործարք է համարվում նաև ՖԳԻԱՍ-ի միջոցով կանխիկ գումարի մուտքագրումը և ստացումը	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
10)	Տեսագրված նյութերի պահպանում առնվազն 120 օր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
11)	Սպասարկման տարածքի սահմանափակում (օր.՝ ՖԳԻԱՍ-ը տեղադրել բարձրության վրա՝ ապահովելով հաճախորդի հարմարավետ սպասարկումը, և/կամ ՖԳԻԱՍ-ի կողքերը տեղադրել պատնեշներ կամ արգելքներ, և/կամ գծել սահման, և/կամ ՖԳԻԱՍ-ը տեղադրել խցիկում և/կամ այլ հնարավոր տարբերակներ)	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
12)	Հաճախորդի սպասարկման տարածքի լավ դիտարկելիություն	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
13)	Տարածքը, որտեղ տեղադրված է ՖԳԻԱՍ-ը, պետք է ապահովված լինի էլեկտրական լուսավորությամբ՝ երեկոյան և գիշերային ժամերին լուսավորելու նպատակով	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
14)						
3.	**Հուսալիությունը**					
1)	Անխափան էլեկտրասնուցման հնարավորության առկայություն	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
2)	Կեղծ թղթադրամների բացահայտման և դրանցով գործարքների կասեցման ապահովում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
3)	Անվճարունակ և հնամաշ ՀՀ թղթադրամների չընդունման/չտրամադրման պահանջի ապահովում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
4.	**Սպառողների շահերի պաշտպանությունը**					
1)	Հաճախորդին ծառայության հիմնական պայմանների վերաբերյալ տեղեկացում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
2)	Գանձվող միջնորդավճարների, կիրառվող փոխարժեքների, ժամկետների, անհրաժեշտության դեպքում մանրի վերադարձման/չվերադարձման և այլնի մասին տեղեկացում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
3)	ՖԳԻԱՍ-ների վրա շահագործող ֆինանսական կազմակերպության անվանման և «թեժ գծի» (հնարավորության դեպքում՝ շուրջօրյա) հեռախոսահամարի պարտադիր առկայություն	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
4)	Ծառայությունը պետք է մատուցվի միայն հաճախորդի հստակ համաձայնությունը ստանալուց հետո (ՖԳԻԱՍ-ի էկրանի վրա ծառայությունը մատուցելու համաձայնության հարցմանը դրական պատասխան պարունակող ստեղնը սեղմելուց հետո): Ընդ որում, համաձայնություն է համարվում հաճախորդի կողմից ցանկացած գործարքի նախաձեռնման վերջում նրան ներկայացվող տեղեկանքին (որտեղ ներկայացվում են հաճախորդի կողմից տվյալ ՖԳԻԱՍ-ի միջոցով իրականացված գործողությունների ցանկը) դրական պատասխանի ստեղնի սեղմումը	պարտադիր (տեղեկանքի վրա առնվազն ներկայացվում է ընդունված և տրամադրվող գումարի մեծությունը, արժույթը, գործարքի պահին կիրառվող փոխարժեքը)	պարտադիր (տեղեկանքի վրա առնվազն ներկայացվում է ընդունված գումարի մեծությունը, արժույթը, գործարքի տեսակը (կոմունալ վճարումներ, փոխանցումներ, միջնորդավճար(առկայության դեպքում))	պարտադիր (տեղեկանքի վրա առնվազն ներկայացվում է ընդունված/ տրամադրվող գումարի մեծությունը, արժույթը, գործարքի տեսակը (կանխիկացում, անկանխիկ փոխանցում, կանխիկի մուտքագրում)	պարտադիր (տեղեկանքի վրա առնվազն ներկայացվում է ընդունված գումարի մեծությունը, արժույթը, գործարքի տեսակը (կոմունալ վճարումներ, փոխանցումներ)	պարտադիր (տեղեկանքի վրա առնվազն ներկայացվում է վճարված գումարի մեծությունը, արժույթը)

5.	**Հաշվապահական հաշվառումը**					
1)	Առնվազն յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրվա վերջում ՖԳԻԱՍ-ի միջոցով կատարված գործառնությունները պետք է ձևակերպվեն ֆինանսական կազմակերպության հաշվապահական հաշվառման համակարգում տվյալ գործառնությունների համար սահմանված հաշվապահական հաշվառման կանոնների համաձայն	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	ոչ պարտադիր
6.	**ԿԲ-ի տեղեկացվածությունը**					
1)	Ֆինանսական կազմակերպությունները ՀՀ ԿԲ կողմից սահմանված ձևով ներկայացնում են հաշվետվություններ՝ հաշվետու ժամանակահատվածի դրությամբ իրենց կողմից տեղադրված/հանված ՖԳԻԱՍ-ների վերաբերյալ	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	ոչ պարտադիր

Հավելված 2
«Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգի»

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 209-Ն որոշմամբ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ գործառնությունների մասով կիրառվող սահմանափակումները

	Գործառնության տեսակը	Կիրառվող սահմանափակումները	Ֆինանսական կազմակերպության նկատմամբ պահանջներ
1.	**Փոխանակում/փոխանցում**		
1)	Կանխիկ արտարժույթի փոխանակում կանխիկ ՀՀ դրամով և հակառակը	Մեկ գործարքի ծավալը ≤ 400000 ՀՀ դրամի կամ համարժեք	ա. բանկային լիցենզիայի առկայություն, կամ բ. փոխանակման կետի լիցենզիայի առկայություն
2)	Կանխիկ ՀՀ դրամի փոխանակում փոքր անվանական արժեքով ՀՀ դրամով	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պահանջների տեսակետից սահմանափակում՝ ≤ 400000 ՀՀ դրամի (հնարավոր ավելի փոքր սահմանափակումները կանխիկի ծավալի մասով կարող են արվել սպասարկողի կողմից)	ա. բանկային լիցենզիայի առկայություն, կամ բ. փոխանակման կետի լիցենզիայի առկայություն
3)	Կանխիկ արտարժույթի փոխանակում փոքր անվանական արժեքով նույն արտարժույթով	Գործարքի ծավալը ≤ 400000 ՀՀ դրամի կամ համարժեքի	ա. բանկային լիցենզիայի առկայություն, կամ բ. փոխանակման կետի լիցենզիայի առկայություն
2.	**Կանխիկացում քարտային հաշվից**		
1)	Կանխիկացում հաշվից /անկախ արժույթի կամ քարտի տեսակից/ՖԳԻԱՍ-ի միջոցով	Ոչ ավելի, քան 500000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար	ա. բանկային լիցենզիայի առկայություն, կամ բ. վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի առկայություն և որպես քարտերը սպասարկող կետ՝ սպասարկող (acquirer) բանկի հետ պայմանագրի առկայություն
2)	Հաշվից կանխիկ ՀՀ դրամի ստացում գանձապահի մասնակցությամբ	Հնարավոր սահմանափակումները տրամադրվող կանխիկի ծավալի և/կամ գործառնությունների քանակի մասով կարող են արվել քարտային համակարգի կանոնների կամ սպասարկող (acquirer) բանկի կողմից	ա. բանկային լիցենզիայի առկայություն, կամ բ. վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի առկայություն և որպես քարտերը սպասարկող կետ՝ սպասարկող (acquirer) բանկի հետ պայմանագրի առկայություն

3)	Հաշվից կանխիկ արտարժույթի տրամադրում ՖԳԻԱՍ-ի միջոցով	Արգելված է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի տեսակետից, քանի որ անհնար է տարանջատել վարկավորման ֆունկցիայով քարտերը, իսկ օրենքի համաձայն՝ «...Բանկերը և վարկային կազմակերպությունները սպառողական փոխառությունները և վարկերը տրամադրում են միայն ՀՀ դրամով»	
3.	**Քարտային հաշվի ամրացում**		
1)	Կանխիկ ՀՀ դրամով – ՀՀ դրամով հաշվի ամրացում	Առանց սահմանափակման (հնարավոր սահմանափակումներ ընդունվող կանխիկի ծավալի մասով կարող են արվել քարտային համակարգի կանոնների կամ սպասարկող (acquirer) բանկի կողմից)	ա. բանկային լիցենզիայի առկայություն, բ. վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի առկայություն և որպես քարտերը սպասարկող կետ՝ սպասարկող (acquirer) բանկի հետ պայմանագրի առկայություն
2)	Կանխիկ ՀՀ դրամով – արտարժույթով հաշվի ամրացում ՖԳԻԱՍ-ի միջոցով	Առանց սահմանափակման (հնարավոր սահմանափակումները ընդունվող կանխիկի ծավալի մասով կարող են արվել քարտային համակարգի կանոնների կամ սպասարկող (acquirer) բանկի կողմից, իսկ փոխարկման հետ կապված սահմանափակումները կարող են արվել թողարկող բանկի կողմից)	ա. բանկային լիցենզիայի առկայություն, բ. վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի առկայություն և որպես քարտերը սպասարկող կետ՝ սպասարկող (acquirer) բանկի հետ պայմանագրի առկայություն
3)	Կանխիկ արտարժույթով հաշվի ամրացում ՖԳԻԱՍ-ի միջոցով	Արգելված է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի տեսակետից, քանի որ անհնար է տարանջատել վարկավորման ֆունկցիայով քարտերը, իսկ օրենքի համաձայն՝ «...Բանկերը և վարկային կազմակերպությունները սպառողական փոխառությունները և վարկերը տրամադրում են միայն ՀՀ դրամով»	
4.	**Հանրային ծառայությունների դիմաց, հարկերի, այլ պետական վճարների և կանխավճարային գործիքների համար կանխիկով վճարում**		
1)	Կանխիկ ՀՀ դրամով վճարում	Մեկ գործարքի առավելագույն գումարը նպատակահարմար է սահմանել 100000 դրամ (հնարավոր սահմանափակումները կանխիկի ծավալի մասով կարող են արվել սպասարկողի կողմից)	ա. բանկային լիցենզիայի առկայություն, կամ բ. վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի առկայություն
2)	Կանխիկ արտարժույթով վճարում	Արգելված է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի տեսակետից	
5.	**Հանրային ծառայությունների դիմաց, հարկերի, այլ պետական վճարների և կանխավճարային գործիքների համար քարտերով վճարում**		
	Քարտային վճարումներ	Առանց սահմանափակման	ա. բանկային լիցենզիայի առկայություն, բ. վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի առկայություն և որպես քարտերը սպասարկող կետ՝ սպասարկող (acquirer) բանկի հետ պայմանագրի առկայություն, եթե հանրային ծառայություն մատուցողի հետ վճարների հավաքագրման պայմանագիրը կնքվել է ՖԳԻԱՍ-ները սպասարկողի կողմից
6.	**Քարտային հաշվից այլ հաշվի վրա փոխանցում**		
		ա. փոխանցումների նպատակի սահմանափակում՝ վարկի և տոկոսների մարում, տվյալ քարտապանի այլ հաշվի ամրագրում և այլն («Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի հնարավոր խախտումները բացառելու տեսակետից), բ. մասնավոր տրանսֆերտների կատարման դեպքում՝ շահառուի անվանումը բանկին նախօրոք հստակ տեղեկացման կամ քարտի համարի պարտադիր նշման միջոցով (Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսակետից՝ նույնականացման պահանջի ապահովում)	ա. բանկային լիցենզիայի առկայություն, բ. վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի առկայություն և որպես քարտերը սպասարկող կետ՝ սպասարկող (acquirer) բանկի հետ պայմանագրի առկայություն
7.	**ՖԳԻԱՍ-ների լիցքավորում/լիցքաթափում**		
		Բանկերի համար՝ ա. բանկի տարածքում գտնվող ՖԳԻԱՍ-ի համար՝ բանկի աշխատակից և անվտանգության ներկայացուցիչ, բ. բանկի տարածքից դուրս գտնվող ՖԳԻԱՍ-ի համար՝ հնկասացիոն ծառայության միջոցով («ՀՀ տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ով նախատեսվող դեպքերում)	ա. բանկային լիցենզիայի առկայություն, բ. վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի առկայություն և որպես քարտերը սպասարկող կետ՝ սպասարկող (acquirer) բանկի հետ պայմանագրի առկայություն
		Վճարահաշվարկային կազմակերպության համար՝ գ. մինչև 3 մլն ՀՀ դրամի լիցքավորում/ լիցքաթափում՝ վճարահաշվարկային կազմակերպության աշխատակից և անվտանգության ներկայացուցիչ, դ. լիցքավորում/լիցքաթափում 3 մլն ՀՀ դրամը գերազանցելուց՝ հնկասացիոն ծառայության միջոցով	գ. վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի առկայություն և որպես քարտերը սպասարկող կետ՝ սպասարկող (acquirer) բանկի հետ պայմանագրի առկայություն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր ուժի մեջ մտած «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվել է Կենտրոնական բանկի կողմից ներդրումային ֆոնդերի կառավարիչների կողմից տեղեկությունների հրապարակման ձևի, կարգի և պարբերականության նկատմամբ պահանջներ սահմանել,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը հաստատելու մասին թիվ 166-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) վերնագիրը «ներդրումային ընկերությունների,» բառերից հետո լրացնել «ներդրումային ֆոնդերի կառավարիչների» բառերով:

2. Որոշման նախաբանը ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ, 70-րդ և 83-րդ հոդվածները, 182-րդ հոդվածի 2-րդ մասը» բառերից հետո լրացնել ««Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը» բառերով:

3. Որոշման 1-ին կետը «ներդրումային ընկերությունների,» բառերից հետո լրացնել «ներդրումային ֆոնդերի կառավարիչների» բառերով:

4. Որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կանոնակարգ 8/03 «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը»»:

2) Կանոնակարգի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի, դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա ներդրումային ընկերությունների, օտարերկրյա ներդրումային ֆոնդերի կառավարիչների մասնաճյուղերի (այսուհետ՝ նաև ընկերություն) կողմից իրենց և իրենց ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման նվազագույն պահանջները և կարգը:»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. օգոստոսի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.09.2011 թ. (ՀՀՊՏ N23 (406), 3.10.2011):

3) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել 21-րդ, 22-րդ, 23-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«21) Հրապարակային, որակավորված ներդրողների ֆոնդ չհանդիսացող ներդրումային ֆոնդ (այսուհետ՝ ֆոնդ), ենթաֆոնդ, ֆոնդի փայ (այսուհետ՝ փայ), ֆոնդի զուտ ակտիվների արժեք, փայի հաշվարկային արժեք, ֆոնդի կառավարիչ, ֆոնդի պահառու, ֆոնդի գործակալ, բաժնետոմս կամ այլ բաժնային արժեթուղթ (այսուհետ՝ բաժնետոմս), բաց ֆոնդ, փակ ֆոնդ, միջակայքային ֆոնդ, պայմանագրային ֆոնդ, կորպորատիվ ֆոնդ, կենսաթոշակային ֆոնդ՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության:

22) Իմաստալից հենանիշ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում կիրառվող նշանակության:

23) Փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխությունը՝ յուրաքանչյուր տնօրինման ժամանակահատվածի համար փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխություն՝ արտահայտված տոկոսներով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխություն} = (\text{ՓՀԱ}_1 - \text{ՓՀԱ}_0) / \text{ՓՀԱ}_0 * 100\%,$$

որտեղ՝

ՓՀԱ$_0$-*ն փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ,*

ՓՀԱ$_1$-*ը փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ:*

4) Կանոնակարգի 4-րդ կետը լրացնել 10-րդ և 11-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10) Այն դեպքերում, երբ տեղեկությունները պարունակում են դրույթներ ֆոնդի ակտիվների եկամտաբերության վերաբերյալ, ապա.

ա. ֆոնդի ակտիվների եկամտաբերությունը հաշվարկվում է կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկման կարգը սահմանող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով,

բ. ակտիվների եկամտաբերության վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառեն ֆոնդի ակտիվների եկամտաբերության վերաբերյալ տվյալներ առնվազն վերջին 5 օրացուցային տարվա համար (5 օրացուցային տարվանից պակաս ժամկետով գործունեություն իրականացնելու դեպքում ներառվում են ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ տեղեկությունները գործունեության ողջ ժամանակահատվածի համար),

գ. պետք է նշվեն այն աղբյուրները, որտեղից մասնակիցը կարող է առավել մանրամասն տեղեկություններ ստանալ ֆոնդի ակտիվների եկամտաբերության վերաբերյալ (առկայության դեպքում),

դ. այդ տեղեկությունները պետք է ներառեն նախազգուշական դրույթ այն մասին, որ ֆոնդի ակտիվների եկամտաբերության վերաբերյալ նախկին ցուցանիշները չեն նշանակում, որ նմանատիպ ցուցանիշներ անպայմանորեն արձանագրվելու են նաև ապագայում,

ե. պետք է նշում լինի այն մասին՝ արդյո՞ք ակտիվների եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշներում ներառված են ֆոնդի հարկերը, ֆոնդի ակտիվներից գանձման ենթակա վճարները և ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերը, թե ոչ:

11) Այն դեպքերում, երբ տեղեկությունները պարունակում են դրույթներ փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխության վերաբերյալ, ապա փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխության վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառեն նախազգուշական դրույթ այն մասին, որ փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխության վերաբերյալ նախկին ցուցանիշները չեն նշանակում, որ նմանատիպ ցուցանիշներ անպայմանորեն արձանագրվելու են նաև ապագայում:»:

5) Կանոնակարգի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Ընկերություններն իրենց կայքում մշտապես հրապարակում և թարմացնում են «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և (կամ) սույն կանոնակարգով սահմանված տեղեկությունները և մշտապես ապահովում են դրանց հասանելիությունը:»:

6) Կանոնակարգի 16-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Գործակալներ (միայն ապահովագրական ընկերությունների և ֆոնդերի կառավարիչների համար):

7) Կանոնակարգը լրացնել 16.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«16.1. Ընկերության կայքի՝ հասցեն մուտքագրելուց հետո հայտնվող առաջին էջում (ընկերության կայքի գլխավոր (առաջին) էջ) անմիջականորեն (ոչ թափվող մենյուի միջոցով) ֆոնդի կառավարիչը

հրապարակում է հայտարարություն ֆոնդերի տեսակի փոփոխման, վերակազմակերպման, ինչպես նաև դրանց հետ կապված ֆոնդի կանոններում (կանոնադրությունում) կատարված փոփոխությունների՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման մասին՝ համապատասխանաբար իրավասու մարմնի կողմից որոշում կայացնելուց և Կենտրոնական բանկում համապատասխան փոփոխությունները գրանցելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան դրան հաջորդող աշխատանքային օրը: Ընդ որում, հայտարարության մեջ ներկայացվում է առնվազն տեղեկատվություն մասնակիցների, նրանց իրավունքների և պարտականությունների վրա ֆոնդերի տեսակների փոփոխության, վերակազմակերպման ազդեցության և հետևանքների մասին, և նշում այն մասին, թե երբ են ֆոնդի կանոնների (կանոնադրության) փոփոխություններն ուժի մեջ մտնում:»:

8) Կանոնակարգի 17-րդ կետի 9-րդ ենթակետում.

ա) «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. Ընկերության ղեկավարների ցանկը, անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, տվյալ ընկերությունում զբաղեցրած պաշտոնը: Ապահովագրական բրոքերները նաև՝ ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձանց՝ Կենտրոնական բանկի ռեգիստրում գրանցման համարը: Ներդրումային ընկերությունները և ֆոնդի կառավարիչները նաև՝ մասնագիտական որակավորման վկայական ունեցող աշխատակիցների որակավորման (մատուցվող ծառայության) տեսակը:»:

բ. «բ» պարբերությունը «մատուցող ֆիզիկական անձինք» բառերից հետո լրացնել «, ֆոնդի կառավարիչների կողմից՝ ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք:» բառերով:

9) Կանոնակարգի 19-րդ կետը լրացնել 5-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) ֆոնդի կառավարիչները՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 10-ի, իսկ ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 11-ի:»:

10) Կանոնակարգի 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27. ***«Գործակալներ»*** մասում ներկայացվում են տվյալ ընկերության (ֆոնդի) անունից և հաշվին հանդես եկող գործակալների մասին տեղեկատվություն, այդ թվում՝ գործակալի.

1) անուն, ազգանունը կամ անվանումը (իրավաբանական անձանց համար),
2) Կենտրոնական բանկում ռեգիստրի համարը (միայն ապահովագրական ընկերությունների համար՝ բացառությամբ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնող անձանց),
3) լիցենզիայի համարը (միայն ֆոնդերի գործակալների համար),
4) ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալին տրված լիազորությունները, ներառյալ՝ ապահովագրական միջնորդության գործառույթները, ապահովագրության դասերը, ապահովագրավճարների և (կամ) ապահովագրական հատուցումների սահմանաչափերը,
5) ֆոնդի կառավարչի կողմից ֆոնդի գործակալին տրված լիազորությունները, ինչպես նաև այն բոլոր ֆոնդերը, որոնց գործակալ է հանդիսանում տվյալ գործակալը, ֆոնդի կառավարչի և ֆոնդի գործակալի միջև կնքված պայմանագրի ժամկետները,
6) հղում գործակալի ինտերնետային կայքին (առկայության դեպքում),
7) գործակալի կապի տվյալները (գործակալի գտնվելու (բնակության) վայր, հեռախոս, աշխատանքային ժամերը):»:

11) Կանոնակարգի 30-րդ կետի 2-րդ ենթակետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Հայտարարություն ցանկացած անձի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի, ժամկետի, տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարի մասին: Ընդ որում, հայտարարությունում հղում է կատարվում այն իրավական ակտին և ակտի հոդվածին, համաձայն որի ծագում է նման իրավունքը:»:

12) Կանոնակարգի 31-րդ կետը լրացնել 4-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) ֆոնդի կառավարիչների համար՝ հայտարարություն ֆոնդերի տեսակի փոփոխման, վերակազմակերպման, ինչպես նաև դրանց հետ կապված ֆոնդի կանոններում (կանոնադրությունում) կատար-

ված փոփոխությունների՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման մասին՝ համապատասխանաբար իրավասու մարմնի կողմից որոշում կայացնելուց և Կենտրոնական բանկում համապատասխան փոփոխությունները գրանցելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան դրան հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ընդ որում՝ պետք է նշվեն կապի միջոցները, որոնցով հնարավոր է ստանալ լրացուցիչ տեղեկատվություն:»:

13) Կանոնակարգի 47-րդ կետը լրացնել 5-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) Կենսաթոշակային ֆոնդերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է այլ ֆոնդերից առանձնացված ձևով:»:

14) Կանոնակարգը լրացնել 56.1, 56.2, 56.3, 56.4, 56.5 և 56.6 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«56.1. Ֆոնդերի գծով տեղեկություններում ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) Պայմանագրային ֆոնդերը ներկայացվում են համաձայն հավելված 12-ի աղյուսակի, որում լրացվում են.

ա. ֆոնդի անվանումը,

բ. փայի դասը,

գ. վերջին մեկ աշխատանքային օրվա, մեկ ամսվա, վեց ամսվա, մեկ տարվա, երկու տարվա, հինգ տարվա և ստեղծման օրվանից փայի հաշվարկային արժեքի փոփոխությունը,

դ. փայի հաշվարկային արժեքը տվյալ աշխատանքային օրվա դրությամբ:

2) Կորպորատիվ ֆոնդերը ներկայացվում են համաձայն հավելված 13-ի աղյուսակի, որում լրացվում են.

ա. ֆոնդի անվանումը,

բ. վերջին մեկ աշխատանքային օրվա, մեկ ամսվա, վեց ամսվա, մեկ տարվա, երկու տարվա, հինգ տարվա և ստեղծման օրվանից բաժնետոմսի հաշվարկային արժեքի փոփոխությունը,

գ. բաժնետոմսի հաշվարկային արժեքը տվյալ աշխատանքային օրվա դրությամբ:

3) Փակ (միջակայքային) ֆոնդերի համար սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված հավելված 12-ի 3-րդ և 4-րդ և հավելված 13-ի 2-րդ և 3-րդ սյունակները չեն լրացվում՝ բացառությամբ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

4) Բաց, փակ (միջակայքային) ֆոնդերի համար սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված հավելված 12-ի 4-10-րդ սյունակները և հավելված 13-ի 3-9-րդ սյունակները լրացվում են միայն այն դեպքերում, երբ լրացվող համապատասխան ժամանակահատվածի առաջին և վերջին օրերի դրությամբ հաշվարկվել է փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը: Այն դեպքերում, երբ լրացվող ժամանակահատվածի առաջին և (կամ) վերջին օրերի դրությամբ չի հաշվարկվել փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը, ապա համապատասխան սյունակում դրվում է «-» նշանը:

56.2. Յուրաքանչյուր ֆոնդի գծով տեղեկություններում առնվազն նշվում են.

1) ֆոնդի անվանումը և գործունեության ժամկետը (եթե նրա գործունեությունը սահմանափակված է որոշակի ժամկետով), ֆոնդի կառավարչի, ֆոնդի պահառուի և ֆոնդի մասնակիցների ռեեստրավարի (եթե այն ֆոնդի կառավարչից տարբերվող այլ անձ է, եթե ոչ՝ նշում այդ մասին) անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցներ և հողում ինտերնետային կայքին (առկայության դեպքում),

2) ֆոնդի ստեղծման ամսաթիվը (օր, ամիս, ամսաթիվ),

3) ֆոնդի տեսակը՝ ըստ ներդրումային քաղաքականության, ըստ ֆոնդի փայերի կամ բաժնետոմսերի, թողարկման և հետգնման (մարման) կառուցակարգի, ըստ տարատեսականացվածության, ըստ իրավական կարգավիճակի և որակավորված ներդրողների ֆոնդ չհանդիսանալու հանգամանքի,

4) ֆոնդի ներդրումային քաղաքականության համառոտ նկարագիրը, այդ թվում՝ ներդրումների ուղղությունները, սահմանաչափերը և այլ յուրահատուկ (աշխարհագրական, ճյուղային և այլն) սահմանափակումները, ներդրումների հետ կապված ռիսկերի համառոտ նկարագիրը,

5) տեղեկություններ ֆոնդի ակտիվներից գանձման ենթակա վճարների և ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի մասին, որն առնվազն ներկայացվում է ըստ վճարների և ծախսերի հետևյալ տեսակների՝ ֆոնդի ակտիվներից գանձման ենթակա ֆոնդի կառավարչի և ֆոնդի պահառուի պարգևավճարները, ֆոնդի հարկերը, ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ֆոնդի կառավարման և պահառության հետ ուղղակիորեն կապված և ֆոնդի ազդագրով (առկայության դեպքում), կանոներով (կանոնադրությամբ) սահմանված ծախսերը, ինչպես նաև այլ ծախսերը, որոնց կատարումը ֆոնդի ակտիվների հաշվին անմիջականորեն նախատեսված է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,

6) ֆոնդի յուրաքանչյուր դասի փայի կամ բաժնետոմսի հաշվարկային արժեքը, ինչպես նաև տեղաբաշխման և հետգնման (մարման) գները և համապատասխան ամսաթիվը, որի դրությամբ դրանք ներկայացված են,

7) փայ (բաժնետոմս) գնելու կամ ֆոնդին միանալու համար անհրաժեշտ քայլերի նկարագրությունը, ֆոնդին միանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

8) փայի (բաժնետոմսի) հետգնման (մարման) կարգի համառոտ նկարագիրը, պայմանները և ժամկետները,

9) կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի համար մասնակցի կամ մասնակցի օգտին երրորդ անձի կողմից կենսաթոշակային կուտակային վճարների վճարման կարգը և ժամկետները,

10) կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի համար կառավարչի կողմից մասնակցին կենսաթոշակներ վճարելու ժամկետը, պարբերականությունը և ձևերը,

11) ֆոնդի ակտիվների կառավարումից ստացված եկամտի՝ մասնակիցների միջև բաշխման համառոտ քաղաքականությունը,

12) նշում այն մասին, որ ֆոնդի և ֆոնդի կառավարչի վերաբերյալ մասնակիցն առավել մանրամասն տեղեկություններ կարող է ստանալ ֆոնդի ազդագրից (առկայության դեպքում) և կանոններից (կանոնադրությունից),

13) կապի միջոցները, որոնց միջոցով կարելի է լրացուցիչ տեղեկություններ ստանալ տվյալ ֆոնդի վերաբերյալ,

14) ֆոնդի պորտֆելի կառուցվածքը, որը պետք է ներկայացնի ֆոնդի ներդրումներն ըստ աշխարհագրական և ոլորտային բաշխվածության,

15) ֆոնդում ներդրման սահմանափակումները, եթե այդպիսիք առկա են,

16) ֆոնդի հերթական և արտահերթ ժողովների գումարման մասին հայտարարություն (ժողովի առկայության դեպքում),

17) ֆոնդի ժողովի ընդունած որոշումները (ժողովի առկայության դեպքում),

18) ֆոնդում կառավարչի մասնակցության չափը,

19) լրացուցիչ ծառայությունները, արտոնությունները, որոնք ստանում է տվյալ ֆոնդի մասնակիցը,

20) ֆոնդի արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության անվանումը, կապի միջոցները, հղում ինտերնետային կայքին (առկայության դեպքում),

21) նշում այն մասին, թե արդյոք ֆոնդի փայերը (բաժնետոմսը) թույլատրված են կարգավորվող շուկայում առևտրին,

22) բաց ֆոնդի համար՝ հայտարարություն, որ յուրաքանչյուր մասնակից կարող է ցանկացած ժամանակ փայը (բաժնետոմսը) ներկայացնել հետգնման (մարման),

23) միջակայքային ֆոնդի համար՝ միջակայքային ժամանակահատվածը և հայտարարություն, որ յուրաքանչյուր մասնակից կարող է փայը (բաժնետոմսը) ներկայացնել հետգնման (մարման) տվյալ ժամանակահատվածում,

24) ենթաֆոնդերը (առկայության դեպքում), ընդ որում, յուրաքանչյուր ենթաֆոնդի վերաբերյալ ներկայացվում է սույն կետի 1-23 ենթակետերով պահանջված տեղեկատվությունն ըստ կիրառելիության:

56.3. Ֆոնդի կառավարչի ինտերնետային կայքում սույն կանոնակարգի 56.1 կետով սահմանված հավելված 12-ում և հավելված 13-ում առկա աղյուսակները պետք է պարունակեն հղում կառավարչի յուրաքանչյուր ֆոնդի էջին, որում պետք է ներկայացվեն կանոնակարգի 56.2 կետով սահմանված տեղեկությունները, ընդ որում, կանոնակարգի 56.2 կետի 17-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը տեղադրվում է ներբեռնվող փաստաթղթի ձևով:

56.4. Ֆոնդի կառավարչի ինտերնետային կայքի յուրաքանչյուր ֆոնդի էջում տեղադրվում է հղում առնվազն հետևյալ փաստաթղթերին.

1) ֆոնդի ազդագիրը (առկայության դեպքում), կանոնները (կանոնադրությունը),

2) ֆոնդի տարեկան ու միջանկյալ հաշվետվությունները, արտաքին աուդիտի եզրակացությունը,

3) ֆոնդի նախորդ երեք տարիների տարեկան հաշվետվությունները:

56.5. Ֆոնդի կառավարչի ինտերնետային կայքի յուրաքանչյուր ֆոնդի էջում պետք է գրաֆիկորեն ներկայացվեն փայի հաշվարկային արժեքները և փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխությունն առնվազն վերջին 5 տարիների համար, իսկ եթե ֆոնդը գործում է ավելի կարճ ժամանակահատվածի ընթացքում, ապա փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը և դրա փոփոխությունը

ֆոնդի գործելու ամբողջ ժամանակահատվածի համար: Ընդ որում, պետք է հնարավոր լինի տեսնել փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը և դրա փոփոխությունը ցանկացած ժամանակահատվածի համար (փակ (միջակայքային) ֆոնդերի համար ներկայացվում է փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը և դրա փոփոխությունը, եթե ժամանակահատվածի առաջին և վերջին օրերի դրությամբ հաշվարկվել է փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը) և պետք է ապահովվի փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի և իմաստալից հենանիշի գրաֆիկների համադրման հնարավորությունը:

56.6. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված դեպքում փայերի թողարկումը, տեղաբաշխումը կամ հետգնումը (մարումը) կասեցնելու դեպքում կառավարչի կայքի գլխավոր էջում պետք է լինի հայտարարություն այդ մասին, ինչը պետք է առնվազն ներառի՝

1)կասեցման պատճառը,

2)կասեցման տևողությունը:»:

15) Կանոնակարգի 57-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Հայտարարություն ցանկացած անձի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի, ժամկետի, տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարի մասին: Ընդ որում, հայտարարությունում հղում է տրվում այն իրավական ակտին և ակտի կոնկրետ դրույթին, համաձայն որի ծագում է նման իրավունքը:»:

16) Կանոնակարգը լրացնել 10, 11, 12, 13 Հավելվածներով՝ համաձայն սույն որոշման 1, 2, 3, 4 Հավելվածների:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 օգոստոսի 2011 թ., N 210-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 210-Ն որոշմամբ

Հավելված 10
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն
որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների,
ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների,
ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների,
Կենտրոնական depozitարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող
վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների
հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի
(եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

Ներդրումային ֆոնդի կառավարչի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից _____ թ.

(հազար դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված ներդրումային ֆոնդի կառավարչի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
1. Ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվ			
2. Կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նորմատիվ			

Կ.Տ.

Ներդրումային ֆոնդի կառավարչի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____

Գլխավոր հաշվապահ _____

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 210-Ն որոշմամբ

Հավելված 11
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն
որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների,
ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների,
ներդրումային ընկերությունների,ներդրումային ֆոնդի կառավարիչների,
Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող
վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների
հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի
(եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

(համախմբված)

Ներդրումային ֆոնդի կառավարչի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից _____ թ.

(հազար դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված ներդրումային ֆոնդի կառավարչի համար	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված ներդրումային ֆոնդի կառավարչի հաշվետվությունների նկատմամբ	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4	5
1. Ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվ				
2. Կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նորմատիվ				

Կ.Տ.

Ներդրումային ֆոնդի կառավարչի վարչության նախագահ

(գործադիր տնօրեն) _____

Գլխավոր հաշվապահ _____

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 210-Ն որոշմամբ

Հավելված 12
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն
որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների,
ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների,
ներդրումային ընկերությունների,ներդրումային ֆոնդի կառավարիչների,
Կենտրոնական depozitարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող
վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների
հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի

Ներդրումային ֆոնդի անվանում	Ներդրումային ֆոնդի փայի դաս	Ներդրումային ֆոնդի փայի հաշվարկային արժեք օր/ամիս/տարեթիվ դիտությամբ	Փայի հաշվարկային արժեքի փոփոխությունը						
			օր/ամիս/տարեթիվ դադիից հաշված ընթացիկ տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ դադիից հաշված 1 տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ դադիից հաշված 6 ամսվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ դադիից հաշված 1 տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ դադիից հաշված 2 տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ դադիից հաշված 5 տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ դադիից հաշված ֆոնդի գոյության ամբողջ ժամանակահատվածում
1	2	3	4	5	6	7	8	9	10
.									

1. ***Փայի հաշվարկային արժեքի փոփոխություն*** յուրաքանչյուր կոնկրետ ժամանակահատվածի համար փայի հաշվարկային արժեքի փոփոխությունն է՝ արտահայտված տոկոսներով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխություն = (ՓՀԱ$_1$ - ՓՀԱ$_0$) / ՓՀԱ$_0$ *100% ,

որտեղ՝

ՓՀԱ$_0$-ն *փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ,*

ՓՀԱ$_1$-ը *փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ:*

Հավելված 4
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 210-Ն որոշմամբ

Հավելված 13
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն
որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների,
ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների,
ներդրումային ընկերությունների,ներդրումային ֆոնդի կառավարիչների,
Կենտրոնական depozitարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող
վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների
հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի

Ներդրումային կորպորատիվ ֆոնդի անվանում	Ներդրումային կորպորատիվ ֆոնդի բաժնետոմսի հաշվարկային արժեքի օր/ամիս/տարեթիվ ներքո	Ներդրումային կորպորատիվ ֆոնդի բաժնետոմսի հաշվարկային արժեքի փոփոխությունը						
		օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված 1 տարվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված 1 եռամսյակի ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված 6 ամսվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված 1 ամսվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված 2 շաբաթվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ պահից հաշվարկված 5 աշխատանքային օրվա ընթացքում	օր/ամիս/տարեթիվ դիրքով հաշվարկված ֆոնդի սուեղծման օրվանից
1	2	3	4	5	6	7	8	9

1. Բաժնետոմսի հաշվարկային արժեքի փոփոխություն՝ յուրաքանչյուր կոնկրետ ժամանակահատվածի համար բաժնետոմսի հաշվարկային արժեքի փոփոխությունն է՝ արտահայտված տոկոսներով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Բաժնետոմսի հաշվարկային արժեքի փոփոխություն} = (\text{ԲՀԱ}_1 - \text{ԲՀԱ}_0) / \text{ԲՀԱ}_0 * 100\%,$$

որտեղ՝

1) ԲՀԱ_0-ն բաժնետոմսի հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ,

2) ԲՀԱ_1-ը բաժնետոմսի հաշվարկային արժեքն է ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ:

2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2011 թվականի հոկտեմբերի 20-ից շրջանառության մեջ դնել «Խաչքարեր» հուշադրամների շարքից «Կեչառիս», «Սանահին», «Գոշավանք», «Գնդեվանք», «Սուրբ Էջմիածնի Մայր տաճար» և «Նորավանք» արծաթե հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք հուշադրամների ուրվագծերի հետ մեկտեղ ներկայացված են Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
31 օգոստոսի 2011 թ., N 227-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 30-ի թիվ 227-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «Կեչառիսի վանք» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Խաչքարեր» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Կեչառիսի վանք» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսին կենտրոնում ներդրված է Կեչառիսի վանական համալիրում գտնվող խաչքարերից մեկի մանրակերտը: Մանրակերտի շուրջ պատկերված են խաչեր և Կեչառիսի վանական համալիրը: Ձախ եզրագծով «ԿԵՉԱՌԻՍԻ ՎԱՆՔ XII ԴԱՐ» և աջ եզրագծով՝ «KECHARIS MONASTERY XII CENTURY» մակագրություններն են, իսկ ներքևում հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2011»:

Հուշադրամը, թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամը հատվել է Լիխտենշտեյնի «Coin Invest Trust» ընկերությունում:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. օգոստոսի 30-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.09.2011 թ. (ՀՀԳՏ N23(406), 3.10.2011):

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	չշրջանառելի (հնաձև)
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

1.1. «Կեչառիսի վանք» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





2. «Սանահինի վանք» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Խաչքարեր» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Սանահինի վանք» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսին կենտրոնում ներդրված է Սանահինի վանքում գտնվող խաչքարի մանրակերտը: Մանրակերտի շուրջ պատկերված են խաչեր և Սանահինի վանքը: Ձախ եզրագծով «ՍԱՆԱՀԻՆԻ ՎԱՆՔ XII ԴԱՐ» և աջ եզրագծով՝ «SANAHIN MONASTERY XII CENTURY» մակագրություններն են, իսկ ներքևում հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2011»:

Հուշադրամը, թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամը հատվել է Լիխտենշտեյնի «Coin Invest Trust» ընկերությունում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	չշրջանառելի (հնաձև)
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

2.1. «Սանահինի վանք» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





3. «Գոշավանք» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Խաչքարեր» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Գոշավանք» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսին կենտրոնում ներդրված է Գոշավանքի համալիրում գտնվող խաչքարերից մեկի մանրակերտը: Մանրակերտի շուրջ պատկերված են խաչեր և Գոշավանքի համալիրը: Ձախ եզրագծով «ԳՈՇԱՎԱՆՔ XIII ԴԱՐ» և աջ եզրագծով՝ «GOSHAVANK MONASTERY XIII CENTURY» մակագրություններն են, իսկ ներքևում հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2011»:

Հուշադրամը, թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամը հատվել է Լիխտենշտեյնի «Coin Invest Trust» ընկերությունում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	չշրջանառելի (հնաձև)
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

3.1. «Գոշավանք» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





4. «Գնդեվանք» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Խաչքարեր» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Գնդեվանք» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսին կենտրոնում ներդրված է Գնդեվանքում գտնվող խաչքարերից մեկի մանրակերտը: Մանրակերտի շուրջ պատկերված են խաչեր, նախշեր և Գնդեվանքը: Ձախ եզրագծով «ԳՆԴԵՎԱՆՔ XIII ԴԱՐ» և աջ եզրագծով՝ «GNDEVANK MONASTERY XIII CENTURY» մակագրություններն են, իսկ ներքևում հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2011»:

Հուշադրամը, թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամը հատվել է Լիխտենշտեյնի «Coin Invest Trust» ընկերությունում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	չշրջանառելի (հնաձև)
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

4.1. «Գնդեվանք» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





5. «Սուրբ էջմիածնի Մայր տաճար» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Խաչքարեր» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Սուրբ էջմիածնի Մայր տաճար» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսին կենտրոնում ներդրված է Սբ. էջմիածնի վանական համալիրի տարածքում գտնվող խաչքարերից մեկի մանրակերտը: Մանրակերտի շուրջ պատկերված են խաչեր, նախշեր և Սուրբ էջմիածնի Մայր տաճարը: Ձախ եզրագծով «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ IX ԴԱՐ» և աջ եզրագծով՝ «MOTHER CATHEDRAL OF HOLY ETCHMIADZIN MONASTERY IX CENTURY» մակագրություններն են, իսկ ներքևում հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2011»:

Հուշադրամը, թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամը հատվել է Լիխտենշտեյնի «Coin Invest Trust» ընկերությունում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	չշրջանառելի (հնաձև)
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

5.1. «Սուրբ Էջմիածնի Մայր տաճար» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





6. «Նորավանք» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Խաչքարեր» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Նորավանք» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսին կենտրոնում ներդրված է Նորավանքի համալիրի տարածքում գտնվող խաչքարերից մեկի մանրակերտը: Մանրակերտի շուրջ պատկերված են խաչեր, նախշեր և Նորավանքի համալիրը: Ձախ եզրագծով «ՆՈՐԱՎԱՆՔ XIII ԴԱՐ» և աջ եզրագծով՝ «NORAVANK MONASTERY XIII CENTURY» մակագրություններն են, իսկ ներքևում հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2011»:

Հուշադրամը, թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամը հատվել է Լիխտենշտեյնի «Coin Invest Trust» ընկերությունում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 9250
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	չշրջանառելի (հնաձև)
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

6.1. «Նորավանք» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
1000
դրամ
dram
REPUBLIC
OF ARMENIA


XIII
դար
ՆՈՐԱՎԱՆՔ
NORAVANK MONASTERY
XIII
CENTURY
2011

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների կիրառման մասին

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի «ժթ» կետի համաձայն հայաստանյան վճարահաշվարկային համակարգը Հայաստանի Հանրապետության տարածքում վճարումների կատարումը ապահովող վճարահաշվարկային համակարգն է կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վճարումների կատարումը ապահովող վճարահաշվարկային համակարգը, որի օպերատորը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ է, իսկ Օրենքի 3-րդ հոդվածի «ի» կետի համաձայն արտասահմանյան վճարահաշվարկային համակարգը՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող օտարերկրյա կամ միջազգային վճարահաշվարկային համակարգն է, որի օպերատորը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չէ:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայաստանյան վճարահաշվարկային համակարգի մասնակիցներ կարող են լինել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ), Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերն ու օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը, վճարահաշվարկային կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իրավասություն ունեցող այլ անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ այն կազմակերպությունները, որոնք իրենց երկրում իրավունք ունեն իրականացնել սույն օրենքով սահմանված վճարահաշվարկային և (կամ) նմանատիպ ծառայություններ:

Օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում է, որ հայաստանյան վճարահաշվարկային համակարգերը ստեղծվում և գործունեություն են իրականացնում Կենտրոնական բանկի խորհրդի թույլտվությամբ, որը տրվում է Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Ներբանկային վճարահաշվարկային համակարգ ստեղծելու համար Կենտրոնական բանկի թույլտվությունը չի պահանջվում: Սույն մասով սահմանված թույլտվություն ստանալու պահանջը չի տարածվում այն վճարահաշվարկային համակարգերի վրա, որոնցում Կենտրոնական բանկը հանդիսանում է համակարգի օպերատոր:

Բանկերը և այլ կազմակերպությունները, որոնք իրավասու մարմնի կողմից տրված լիցենզիայի համաձայն իրավասու են մատուցել վճարահաշվարկային ծառայություններ, կարող են մասնակցել արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում Կենտրոնական բանկի խորհրդի թույլտվությամբ, որը տրվում է Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

2011 թվականի ապրիլի 14-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց ««Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-131-Ն): Այդ օրենքի փոփոխությունների նպատակներից են՝ վճարահաշվարկային համակարգերի (հայաստանյան և արտասահմանյան) կարգավորման և վերահսկողության պահանջների խստացման միջոցով այդ համակարգերի, ինչպես նաև ֆինանսական կայունության ամրապնդումը և հուսալիության բարձրացումը:

Օրենքի և վերը նշված օրենքի փոփոխությունների նպատակը Կենտրոնական բանկի կողմից հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի անդամակցության համար թույլտվությունների տրամադրման միջոցով այդ համակարգերում առաջացող ռիսկերի բացահայտումն ու կանխարգելումն է:

Մինչև համապատասխան թույլտվությունների տրամադրումը Կենտրոնական բանկը պետք է կատարի մի շարք գործողությունների ամբողջություն, այն է՝ վերլուծի և գնահատի այն բոլոր ռիսկերը (իրավական, ֆինանսական, գործառնական, այդ թվում՝ տեղեկատվական անվտանգության), որոնք կարող են պայմանավորված լինել համակարգի կանոններով և վերջինիս գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով կամ դրանցում առկա թերություններով և բացերով, և որոնց իրականացումը կարող է բերել ինչպես համակարգում մասնակցող ՀՀ բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների (ֆինան-

սական կազմակերպությունների) ֆինանսական վիճակի վատթարացմանը, այնպես էլ բացասաբար անդրադառնալ հանրության վստահության վրա՝ կապված համակարգով վճարահաշվարկային ծառայությունների մատուցման հետ: Վերջինս իր հերթին կարող է արտասահմանյան համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետությունում մատուցվող ծառայությունների ծավալից կախված վտանգել նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը: Այսինքն՝ Կենտրոնական բանկը վճարահաշվարկային համակարգերի ստեղծման, գործունեության և մասնակցության համար թույլտվություններ տրամադրելու միջոցով կանխարգելում և/կամ վերահսկում է այն բոլոր ռիսկերը, որոնք կարող են վտանգել Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը:

Հիմք ընդունելով Օրենքի, վերը նշված օրենքի փոփոխությունների կարգավորումները,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի քաղաքականությունը, այն է՝ վերը նշված նկատառումներից ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում խիստ վերահսկողություն իրականացնել վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության նկատմամբ,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերաբերյալ **պարզաբանում է**.

1. Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերը ստեղծվում և գործունեություն են իրականացնում Կենտրոնական բանկի խորհրդի թույլտվությամբ, որը տրվում է Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Թույլտվություն ստանալու պահանջը չի տարածվում այն վճարահաշվարկային համակարգերի վրա, որոնցում Կենտրոնական բանկը հանդիսանում է համակարգի օպերատոր:

Ներբանկային վճարահաշվարկային համակարգ ստեղծելու համար Կենտրոնական բանկի թույլտվությունը չի պահանջվում:

2. Բանկերը և այլ կազմակերպությունները, որոնք, իրավասու մարմնի կողմից տրված լիցենզիայի համաձայն, իրավասու են մատուցելու վճարահաշվարկային ծառայություններ, կարող են մասնակցել արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերին Կենտրոնական բանկի խորհրդի թույլտվությամբ, որը տրվում է Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

3. Սույն պաշտոնական պարզաբանման հրապարակման օրվան հաջորդող օրվանից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 4-ի «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների կիրառման մասին» թիվ 2 պաշտոնական պարզաբանումն ուժը կորցրած ճանաչել:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
16 սեպտեմբերի 2011 թ., N 1

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի նիստի «2011 թվականի հոկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

2011 թվականի հոկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 39

Իրական հատվածի ցուցանիշներ 42

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 45

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 50

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 51

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ֆինանսական համակարգի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 63

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ ոլորտների

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 85
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ՀՀ դրամով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի արտարժույթով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
Առևտրային բանկերի ավանդներ 98
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 100
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 106
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (11.10.2011)

2011 թվականի հոկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2011 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Չիլինգարյանը. Ա. Դարբինյանը, Ա. Մկրտչյանը, Օ. Աղասյանը, Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: 2011 թվականի սեպտեմբերին 12-ամսյա գնաճը նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատությամբ ավելացել է 1.4 տոկոսային կետով և կազմել 6.2%: Տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանին մոտ կամ դրանից բարձր գտնվելու մեծ հավանականության վերաբերյալ խորհուրդը նախանշել էր նախորդ ամսվա սկզբին և հրապարակել սեպտեմբերի 16-ի մամլո հաղորդագրության մեջ: Սեպտեմբերին ևս պարենային ապրանքների գների աճի նպաստումն ընդհանուր գնաճին գերակշռել է՝ 12-ամսյա կտրվածքով կազմելով 5 տոկոսային կետ, որից միայն 3.4 տոկոսային կետը բաժին է ընկել մսամթերքի, կաթնամթերքի, ձվի և շաքարավազի գների աճին: Ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների նպաստումը գնաճին կազմել է համապատասխանաբար 0.5 և 0.7 տոկոսային կետ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2011 թվականի սեպտեմբերին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 0.8% գնաճ, որը գրեթե ամբողջությամբ պայմանավորվել է պարենային ապրանքների գների 1.3% աճով (նպաստումը՝ 0.7%)՝ ի հաշիվ «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբի գների 7.1% աճի: Ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.5%-ով, իսկ ծառայությունների սակագները՝ 0.1%-ով:

2011 թվականի երկրորդ եռամսյակի տնտեսական ակտիվության ցուցանիշը, հաշվարկված փոփոխված մեթոդաբանությամբ, կազմել է 3.9%: Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) օգոստոսին կազմել է 9.6%. ընդ որում, աճ արձանագրվել է տնտեսության բոլոր ճյուղերում՝ բացառությամբ շինարարության: Արդյունաբերության ճյուղում արձանագրվել է թողարկման ծավալների 12.4%-ով աճ, ծառայությունների և առևտրի ոլորտներում համապատասխանաբար 6.1% և 3.6%-ով աճ՝ ի հաշիվ ֆինանսական և ապահովագրական գործունեության, առողջապահության և կրթության ոլորտների: Գյուղատնտեսության ճյուղի թողարկման ծավալների աճը կազմել է 12.2%՝ բուսաբուծության ենթաճյուղում արձանագրված 30.5% աճի հաշվին: Շինարարության ճյուղի անկումը կազմել է 18.7%, որի պատճառը, ինչպես նախկինում նշվել էր, միջազգային վարկերի, կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների կրճատումն է, ինչը փոքր-ինչ մեղմվել է պետական բյուջեի, համայնքների միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճով:

Ըստ արտաքին ապրանքաշրջանառության ցուցանիշների՝ պահպանվել է արտահանման աճի տեմպը՝ հունվար-օգոստոսին կազմելով 31.3%: Ներմուծման աճը նույն

ամիսներին կազմել 10.7%: Ի տարբերություն արտահանման աճի, որ կանխատեսվածի շրջանակում է, ներմուծման աճը զիջում է կանխատեսումներին:

Հարկաբյուջետային հատվածում շարունակվել են տարեսկզբի միտումները. արձանագրվել են տնտեսումներ ինչպես Կառավարության կողմից երրորդ եռամսյակի համար սահմանված համամասնությունների, այնպես էլ ԿԲ կանխատեսումների նկատմամբ, որը գնաճային միջավայրի վրա թողնում է զսպող ազդեցություն:

Ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի երրորդ եռամսյակի միտումները. ռեպո շուկայում նկատվել է տոկոսադրույքների նվազման միտում. շուկայական ռեպո տոկոսադրույքը հունիսի համեմատությամբ նվազել է 0.48 տոկոսային կետով՝ կազմելով 9.71%, իսկ միջբանկային ռեպո տոկոսադրույքը՝ 0.28 տոկոսային կետով՝ կազմելով 9.32%: Միաժամանակ, մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում հունիսի համեմատ միջին տոկոսադրույքը նվազել է 1.55 տոկոսային կետով և կազմել 8.07%:

2011 թ. սեպտեմբերին արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը հունիսի համեմատությամբ դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 0.64 %-ով՝ կազմելով 372.28 դրամ, եվրոյի նկատմամբ՝ 5.04%-ով՝ կազմելով 513.4 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 10.3 %-ով՝ կազմելով 12.14 դրամ:

Ֆինանսական շուկայի նշված զարգացումների պայմաններում դրամավարկային ցուցանիշներն արձանագրել են հետևյալ միտումները. չնայած դրամային և փողի զանգվածների 12-ամսյա գրեթե հավասար՝ 24-25% աճին՝ արձանագրվել է դրամային ավանդների առաջանցիկ աճ արտարժութային ավանդների համեմատությամբ՝ համապատասխանաբար 41.1% և 23.7%: Երրորդ եռամսյակում արձանագրվել է արտարժութային ավանդների 2.7%-ով նվազում (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը): Արդյունքում, եռամսյակի ընթացքում դոլարայնացման մակարդակը նվազել է 0.7%-ով, իսկ 12-ամսյա կտրվածքով՝ 0.5%-ով: Պահպանվել է նախորդ ամիսներին գրանցված դրամով վարկավորման աճը՝ 12-ամսյա կտրվածքով՝ 24%, որը դեռևս զիջում է արտարժութային վարկավորման 40% աճին (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը): Ընդհանուր վարկավորման աճը դանդաղել է. 12-ամսյա աճը կազմել է 33.9%, մինչդեռ նախորդ ամիս այդ ցուցանիշը կազմել էր 37%:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Զարգացած երկրների պարտքային հիմնախնդիրների քաղաքական լուծումների անորոշության պայմաններում սեպտեմբերին համաշխարհային տնտեսական աճի հեռանկարն ավելի վատատեսական դարձավ: Սեպտեմբերին հրապարակված ԱՄՀ հերթական զեկույցում 2011 և 2012 թվականների համաշխարհային տնտեսական աճի կանխատեսումները նվազեցվել են և կազմում են տարեկան 4-ական տոկոս՝ պայմանավորված հիմնականում զարգացած երկրների տնտեսական ակտիվության նվազմամբ: Գնաճի կանխատեսումները ճշգրտվել են զարգացող երկրների հաշվին. զարգացած երկրներում 2011 գնաճը կանխատեսվել է 2.6%-ի շրջանակում, իսկ զարգացողներում՝ 7.5%-ի շրջանակում: 2011 թվականին ՀՀ գործընկեր երկրներից Ռուսաստանի համար կանխատեսվել է 4.3% տնտեսական աճ և 7.3% գնաճ: ԱՊՀ երկրների և Վրաստանի գնաճը կանխատեսվել է 10%-ի շրջանակում:

Ինչ վերաբերում է սեպտեմբերին հիմնական հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներին՝ նվազել են արդյունաբերական և թանկարժեք մետաղների գները: Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից հրապարակված պարենային ապրանքների գների ինդեքսը սեպտեմբերի համեմատությամբ նվա-

զել է 2.2%-ով: Թեև սեպտեմբերին նավթի միջազգային գինն ավելացել է 0.7%-ով, սակայն երրորդ եռամսյակում արձանագրվել է 3.9% անկում:

Խորհուրդն արձանագրեց, որ ներկայումս տնտեսության արտաքին հատվածից եկող ազդակները գնաճային միջավայրի վրա շարունակում են մնալ չեզոք: Սակայն դեռևս անորոշ են զարգացած երկրների հիմնարար անհաշվեկշռվածություններին այդ երկրների մակրոտնտեսական քաղաքականությունների արձագանքները: Վերջիններով պայմանավորված՝ համաշխարհային տնտեսությունը կարող է զարգանալ տարբեր սցենարներով՝ փոփոխելով գնաճային միջավայրը:

Ինչ վերաբերում է ՀՀ տնտեսությունից եկող ազդակներին, դրանք պայմանավորող գործոնները ունեն հետևյալ վարքագիծը. տնտեսական ակտիվության աճի պայմաններում արտադրողականության և անվանական աշխատավարձի աճերը համահունչ էին: Թեև երրորդ եռամսյակում հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է չեզոք բնույթ, սակայն հաշվի առնելով նաև նախորդ եռամսյակների քաղաքականության լագային ազդեցությունները, գնաճային միջավայրի վրա կթողնի զսպող ազդեցություն: Գնաճային միջավայրի վրա դեռևս շարունակում է զսպող ազդեցություն թողնել փետրվար-ապրիլի վերաֆինանսավորման տոկոսադրույքի 1.25 տոկոսային կետով բարձրացումը:

Խորհուրդը գտնում է, որ ներքին տնտեսությունից եկող ազդակները գնաճային միջավայրի վրա ընդհանուր առմամբ զսպող են, երբ հանրագումարի են բերվում աշխատանքի շուկայի, մասնավոր ծախսումների, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ազդեցությունները: Վերջիններս հետագայում մեծապես կախված կլինեն նաև արտաքին հատվածի զարգացումներից:

Խորհուրդն ամփոփեց, որ գնաճի վերջին ամիսների զարգացումները համահունչ են 2011 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրերում նախանշված հետագծին: Թեև սեպտեմբերի վերջին գնաճը գերազանցել է տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանը, սակայն առաջիկա ամիսներին ակնկալվում է դրա աստիճանական նվազում: Սեպտեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույքի 0.5 տոկոսային կետով նվազեցումից հետո ֆինանսական շուկայում ներկայումս ձևավորված և ակնկալվող տոկոսադրույքները, անորոշություններից բխող ռիսկերի չափավոր դրսևորման պայմաններում, թույլ կտան ձևավորել համախառն պահանջարկի այնպիսի մակարդակ, որ գնաճը գտնվի 4%±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում:

2011 թվականի հոկտեմբերի 11-ի նիստում Խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%, լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 11.0% և 5.0%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվամում	*2011թ. օգոստոս*	*2011թ. օգոստոսի իրական աճի ինդեքսը 2010թ. օգոստոսի նկատմամբ (%)*	*2011թ. սեպտեմբեր*	*2011թ. սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2010թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	-	-	109.0
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	78165.4	84241.8	92740.8	116.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	662.4	636.4	486.5	84.2
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	96577.0	130609.3	169042.7	118.6
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	165961.8	179116.9	188603.6	101.7
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	35071.7	41455.9	49144.7	74.8
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	78412.4[1]	78857.0[1]	79012.0	103.5
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	118395[2]	113554[2]	114463[2]	100.8[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1214.1[2]	1213.1[2]	1211.9	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	73.6	72.6	71.4	-
Գործազրկության մակարդակը *(%)*	6.1	6.0	5.9	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2011 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.4[1]	102.3	98.0	102.0
Փետրվար	100.9[1]	103.3	103.6	103.4
Մարտ	100.8	99.4	87.4	102.8
Ապրիլ	99.8	100.3	104.2	102.0
Մայիս	100.0	98.7	97.9	97.4
Հունիս	98.6	100.1	100.4	86.1
Հուլիս	97.0	96.9	98.9	78.5
Օգոստոս	99.4	100.7	101.7	84.8
Սեպտեմբեր	100.8	101.2	99.3	86.2
2011 թ. հունվար – սեպտեմբերը 2010 թ. հունվար – սեպտեմբերի համեմատությամբ	108.5	110.9	98.3	119.9

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2009*	*2010*	*2011*	*2011*	*2011*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.2	1.7	3.4 [1]	3.4 [1]	10.3[1]
Փետրվար	-1.8	0.3	0.9 [1]	0.9 [1]	11.4 [1]
Մարտ	1.4	0.8	0.8	0.8	11.5
Ապրիլ	3.2	1.3	-0.2	5.0	8.9
Մայիս	1.6	1.0	0.0	5.0	9.0
Հունիս	-0.3	-0.8	-1.4	3.5	8.5
Հուլիս	-2.7	-0.8	-3.0	0.4	6.3
Օգոստոս	-0.4	1.3	-0.6	-0.2	4.8
Սեպտեմբեր	0.7	-0.2	0.8	0.6	6.2
Հոկտեմբեր	0.5	1.0			
Նոյեմբեր	1.2	1.6			
Դեկտեմբեր	2.0	1.8			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	6.5	9.4			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.4	8.2			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [2]

Անվանում	*2011 թ. սեպտեմբերը 2011 թ. օգոստոսի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [2]*
ՍԳԻ	**100.8**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**101.2**	**0.64**
Բանջարեղեն և կարտոֆիլ	107.1	0.44
Շաքարավազ	120.9	0.22
Մսամթերք	101.0	0.10
Կաթնամթերք	101.2	0.05
Ձու	103.0	0.04
Միրգ	97.8	-0.08
Հացամթերք	99.6	-0.04
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.5**	**0.08**
Հագուստ և գործվածք	101.8	0.05
Կոշկեղեն	102.4	0.04
Մշակույթի ապրանքներ	106.1	0.02
Ծառայություններ, որից՝	**100.1**	**0.03**
Կրթության համակարգի	103.9	0.04
Հանգստի կազմակերպման	103.2	0.02
Տրանսպորտի	99.5	-0.02

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ[3]

ժամանակաշրջան	2008	2009	2010	2011
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.40	-0.29	0.48	0.78[4]
Փետրվար	0.83	-0.53	0.74	0.45[4]
Մարտ	0.66	1.14	0.82	0.70
Ապրիլ	1.26	1.46	0.70	0.44
Մայիս	0.55	0.41	0.04	0.33
Հունիս	0.30	0.25	-0.22	0.43
Հուլիս	0.02	-0.22	-0.42	0.21
Օգոստոս	0.06	0.37	0.17	0.32
Սեպտեմբեր	0.48	0.72	0.63	0.45
Հոկտեմբեր	0.10	0.48	1.21	
Նոյեմբեր	0.25	0.62	1.18	
Դեկտեմբեր	0.08	0.61	0.63	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.91	4.63	6.20	6.77[4]
Փետրվար	3.77	3.02	7.59	6.21[4]
Մարտ	4.54	3.33	7.14	6.20
Ապրիլ	5.66	3.47	6.35	5.78
Մայիս	5.94	3.37	5.92	6.09
Հունիս	6.47	3.36	5.40	6.72
Հուլիս	6.75	3.20	5.16	7.36
Օգոստոս	6.97	3.52	4.96	7.47
Սեպտեմբեր	6.99	3.71	4.86	7.46
Հոկտեմբեր	6.21	4.16	5.53	
Նոյեմբեր	5.56	4.72	6.16	
Դեկտեմբեր	5.37	5.25	6.26	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼ ԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**7.46**
Տավարի միս	1.02
Չու	0.76
Պանիր տնական (կովի կաթից)	0.69
Բենզին	0.40
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.40
Կարագ	0.40
Խոզի միս	0.34
Շաքարավազ	0.31
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.31
Պանիր «Չանախ»	0.28
Աղացած միս	0.16
Պանիր «Լոռի»	0.14
Աղացած սև սուրճ	0.12
Բուսական յուղ (արևածաղկի)	0.12
Ծխախոտ «Գառնի»	0.10

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[3] ԱՎԾ տվյալների հիման վրա ՀՀ ԿԲ հաշվարկներ՝ «Արտաքսման և ճշգրտման» եղանակով:

[4] Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2011 թ. հունվար – օգոստոս (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – օգոստոսը 2010 թ. հունվար – օգոստոսի նկատմամբ (%)*	*2011 թ. հունվար – սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – սեպտեմբերը 2010 թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	826.9	131.3	969.7	133.5
Ներմուծում *(ՍԻՖ)*	2597.0	110.9	2979.5	112.0
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1770.2	103.4	2009.8	103.9

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – սեպտեմբեր			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	752463	109556	642906	1114114	172036	942078
ԱՄՆ	90703	74067	16635	124426	108425	16001
Ուկրաինա	14971	16062	-1091	20197	20724	-527
Ղազախստան	13338	2334	11004	19845	3082	16763
Գերմանիա	15146	15513	-367	21175	23861	-2686
Իսպանիա	5699	8230	-2532	8368	10834	-2466
Ֆրանսիա	11500	13499	-2000	17062	18774	-1711
ԱՄԷ	19847	38917	-19070	26198	55500	-29303
Չինաստան	1259	57536	-56276	2068	80011	-77943
Թուրքիա	1884	28573	-26689	2639	40547	-37909
Այլ երկրներ	174428	140133	34296	270964	197761	73203
Ընդամենը	**1101237**	**504420**	**596817**	**1627056**	**731555**	**895500**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	131788	17863	113925	958984	132814	826171
ԱՄՆ	11483	10545	939	96596	100261	-3665
Ուկրաինա	2273	2265	8	20811	19020	1791
Ղազախստան	2016	234	1782	16466	1822	14645
Գերմանիա	2429	2569	-141	19461	20006	-545
Իսպանիա	762	1354	-593	7357	7744	-387
Ֆրանսիա	1778	1536	241	13599	17880	-4280
ԱՄԷ	1438	5050	-3612	15682	41158	-25476
Չինաստան	433	9934	-9501	2681	58995	-56314
